

ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1992 թվականի դեկտեմբերի 31-ն է: Եվս մի քանի ժամ, և կսկսի նոր տարին՝ նոր տեսիլքներով ու նոր հավատով: Ահավասիկ այս հույսով է, որ, հետևելով գեղեցիկ ավանդությանը, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, հավաքված Մայր Աթոռի տոնական զարդարված սեղանատանը, Մայրավանքի ողջ միաբանությունը, հոգևորականներ՝ տարբեր վանքերից ու եկեղեցիներից, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, հրաժեշտ տալու անցնող տարվան և լավագույն տրամադրություններով ու նոր տեսիլքով, նոր ծրագրերով և նոր իրագործումներով դիմավորելու Նոր տարին:

Արդարև այս հույսով ու լավատեսությամբ էլ ներկաները միաբերան արտասանում են Տերունական աղոթքը: Ապա Նորին Սրբությունն օրհնում է բարիքներով լի տոնական սեղանը:

Հնչում են Հայաստանի Հանրապետության օրհներգը և հոգևոր ճեմարանի քայլերգը, որից հետո Դ. լսարանի սան Անդրանիկ Ժամկոչյանը կարդում է մի հատված Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» գրքից: Այնուհետև հանդիսավոր երեկոյի բացման ու շնորհավորանքի խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր. սիրելի սաներ և ներկաներ: Եվս մի քանի ժամ, և երկրագունդը կբոլորի, կամբողջացնի իր տարեկան պտույտը:

Ժողովուրդներ ու ազգեր, մեծ հույսերով ու ակնկալիքներով կսպասեն վաղվա օրվան ու Հրաշամանուկ Հիսուսի գալիք, պայծառ Ծնունդին:

Աշխարհի շատ երկրներում, փոքրիկներ ու մեծեր կունենան առատ լույս, ջերմություն ու խինդ: Մինչ մեր Աշխարհում, հայոց հողում, մեր մանուկները լուրջ ու մեծավարի, մոմի ու լամպի աղոտ լույսի տակ, կփորձեն զանազանել Նոր տարվա տոնածառի խաղալիքների խամրող գույներն ու սառչող ձեռքերով շոշափել նրանց: Իրենց էությամբ ու ճոխությամբ տարբեր Նոր տարիներ կլինեն դրանք:

Զարմանալի կանխատեսությամբ հունա-հռոմեական աշխարհի մեծ մտածողները հնում կարողացել են տեսնել կերպարներ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունն ու ժամանակի հետ խոսող խոր իմաստը:

Իմ մտքի առջև հիմա արդարադատության աստվածուհու կերպարն է:

Որքան այժմեական է այն այսօր: Կամավոր կուրացած մի արդարություն, որի ձեռքում կշեռքն է իր ափսեներով: Նժարի մի կողմում (ծանր կողմ) լցված են ոսկի ու նավթ, երկաթյա զենքեր, իշխանություն ու փառք, իսկ մյուս կողմում ճնշված ու հալածված, փոքր ազգերի բռնաբարված պատիվն ու ազգային անկախությունը, ազատության վսեմ գաղափարը: Եվ ցավալին այն է, որ կինը ոչինչ չի կարող փոխել ա՛դ կշեռքի վրա, քանի որ նրա ձեռքերն զբաղված են ու աչքերը փակ:

Այսօր էլ կամավոր այդ կույր արդարությունը չի կարողանում կամ չի ուզում տեսնել, որ մեր փոքրիկ, բայց ազատատենչ ժողովուրդը չի ցանկանում ստրուկի նման հանդուրժող լինել նենգ ու բիրտ հարևանի ողորմելի խաղերին ու ոտնձգություններին, այլ տղամարդու պես պարզ ու բաց ճակատով, ելել է կռվի հանուն ազատության, հանուն սերունդների հետագա գոյատևման երաշխիքի ապահովման:

Այդ ազատատենչ պայքարի լավագույն վկաներն այսօր մեր քաջարի Արցախն է, մեր հայրենիքի սահմանամերձ գոտիները:

Վեհափառ Հայր,

Ճիշտ է, որ մեր աշխարհն այսօր գտնվում է տնտեսական ու քաղաքական ծանր վիճակում: Շատ բաներ չկան: Վաղվա ապագան նույնպես աղոտ է: Բա՛ց այսօր առավել քան երբևէ, մեր հոգիները ապառազեն են ու խարազանազգեստ: Մենք պատրաստ ենք գալիք հոգևոր պատերազմներին:

Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս և որպես անձնավորություն, թող թույլ տրվի ճիշտն ասեմ, որ Դուք բնավորության մի լավ գիծ ևս ունեք: Դա Ձեր լավատեսությունն է: Տարիների ընթացքում մենք նկատել ենք, թե ինչպես է այդ լավատեսությունը հաղթում ամեն մի նեղության, վշտի, վտանգի դեպքում:

Մենք սիրել ենք այդ լավատեսությունը և սովորել մեր մեջ նույնպես կրել նրա մի մասնիկը:

Եվ այսօր էլ, Նոր տարվա այս շեմին, մենք՝ Հայաստանյայց Եկեղեցու համեստ սպասավորներս, ոգևորված Ձեզանով, Ձեր անձով ու գործունեությամբ, լավատեսությամբ սպասում ենք գալիքին:

Հայաստանն ստեղծված չէ ձմռան համար: Այն գարունքի ու ծաղկի երկիր է: Թող ուրեմն շուտ գա այդ գարունը, մեր ժողովրդի վաղվա գարունը:

Վեհափառ Տեր,

Թույլ տվեք հանուն հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության, որոնց մեկ մասն այսօր, հայտնի պայմանների բերումով, բացակա է, ջերմորեն շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին ու մաղթել Ձեզ երկար ու քաջառողջ տարիներ՝ ի պայծառություն մեր Ս. Եկեղեցու և ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովրդի:

Ամանորի մեր ջերմ շնորհավորանքները նույնպես այստեղ գտնվող մեր բոլոր միաբան եղբայրներին, քահանա հայրերին, հյուրերին և ուսանողությանը: Մաղթում ենք նրանց հոգու արիություն, համբերություն և երջանկություն Նոր՝ 1993 տարում:

Շնորհավոր Նոր տարի»:

Տեսուչ Սրբազան հոր խոսքից հետո հոգևոր ճեմարանի սաները երգում են Ս. Ներսես Շնորհալու «Այսօր երկնայինը» և «Այսօր ցնծան» շարականները: Ապա Ե լսարանի սան Վազգեն Գալստյանը արտասանում է

Ներսես Վանականի «Նոր տարի» բանաստեղծությունը: Այնուհետև ճեմարանի երգչախումբը երգում է «Ով Հայոց աշխարհ» և «Դարձյալ փայլեց» երգերը: Հոգևոր ճեմարանի Դ լսարանի սան Հովհաննես Մարտիրոսյանը արտասանում է Ալեքսիք Իսահակյանի «Հեյ ջան հայրենիք» բանաստեղծությունը:

Հանուն ուսանողության Վեհափառ Հայրապետին ու ներկաներին ուղղված շնորհավորական խոսքով հանդես է գալիս Զ լսարանի սան Վարուժան սրկ. Տերտերյանը.

«Վեհափառ Տեր, Գերաշնորհ սրբազան հայրեր, Հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, բարեշնորհ սարկավագ եղբայրներ, սիրելի ուսանողներ և ներկաներ:

Անցնող ժամանակի հետ ծնունդ առնող և առաջացող իրականությունները են սկզբնավորում ու արժևորում պատմությունը: Եվ ժամանակի հավերժական շարժման մեջ յուրաքանչյուր մարդ իր խղճի թելադրանքով ու Աստուծո արդար դատաստանի երկյուղը սրտում փորձում է խորհրդածել, ապրել ու ներշնչվել, ոգևորվել ու մխիթարվել իր հետևում թողած ժամանակի հաջողություններով ու ձեռքբերումներով: Ցնծությամբ է լցվում մեր հոգին և բազմապատկվում մեր ուրախությունը, երբ տեսնում ենք, որ մեր մեջ այն մեկ հատիկ սերմը դարձել է բազմարդյուն ու դիզված գանձ՝ երկնային կյանքի համար: Եվ այդժամ է, որ մեր սրտի խորքերից կարծես լսելի է լինում Աստուծո ձայնը. «Կեցցես բարի և հավատարիմ ծառայ» և վերջապես հոգեկան մխիթարանքի այդ պահը վստահություն է ներշնչում մեզ, որ նրանց հետ լինենք, «ոյք արտասուօք ցանեցին և ցնծութեամբ հնձեցին», մենք էլ՝ երջանկահիշատակ Խորեն Մուրադբեկյան նահատակ հայրապետի խոսքերով. «Պարզերես կարող ենք կանգնել Աստուծո, Եկեղեցու, ազգի ու պատմության դատաստանի առաջ»:

Վեհափառ Տեր, հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողության թույլ տվեք շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին և հուրախություն Ձեզ հավատացնել, Ձեր շուրջ համախմբված կանք հավատքով, սիրով ու հայրենասիրությամբ լցված մի խումբ երիտասարդներ, որոնք լավ են գիտակցում հոգևորականի բարձր կոչումը, որոնց համար ամեն բանից առավել ու գերադասելի է Աստծուն ու ազգին խոնարհաբար ծառայելը, որոնց մեջ հավատո հոգին է խոսում, ա՛ն հոգին, որ այսօր հայության մեջ ամենուրեք է՝ թե Հայաստանում և թե մաքառող Արցախի հերոսական բարձունքներում:

Վեհափառ Տեր, Ձեր հայրապետական մտահոգությունները ու սեփական հոտը պաշտպանող ճշմարիտ հովվի Ձեր վճռական կեցվածքը ընդդեմ օտարամուտ աղանդների և Ձեր հայրենասիրական ձեռնարկները, որոնք արժանի ընդունելություն գտան բովանդակ հայության կողմից, բազում դժվարությունները ու ծով կարիքները հաղթահարելու Ձեր հայրենանվեր իղձը մեզ համար դարձավ գերագույն նպատակ ապագայի մեր առաքելության համար:

Անցնող ուսումնական տարին կարևոր մեկ տարի եղավ Հոգևոր Ճեմարանի ուսանողության համար, մենք վկաները դարձանք հոգսաշատ ու փորձություններով լի կյանք հաղթահարող, անկոտրում կամք ունեցող մի ժողովրդի, վերջին չորս տարիների ընթացքում: ականատեսներն եղանք հայոց հոգու ալեկոծումներին: Հավատացեք. տեսնել և ապրել այսքան դժվարությունները, քաջաբար և պատվական արժանապատվությամբ տանող այս ժո-

ղովրդի հոգեկան կորովն ու լավատեսությունը՝ այսօրվա ճեմարանցին չի կարող չխորհել՝ թե ինչպե՞ս կարելի է հոգևոր գործիչ կամ ֆիդայի չլինել պաշտպանելու համար իր հոտի նվիրական սրբությունները:

Փառք ու պատիվ մեր միաբանակից եղբայրներին ու հոգևոր հայրերին, հավատավոր ու բոլորանվեր քաջ հովիվներին, որ իրենց ուսերին առած մեր Տիրոջ ծանր, բայց քաղցր լուծը բորբոքեցին ու անշեջ պահեցին մեր մեջ քրիստոնեական լույս հավատքը, եկեղեցասիրությունն ու եղբայրասիրությունը:

Փառք շնորհակալ գործի անխոնջ նվիրյալներին՝ Հոգևոր Ճեմարանի մեր սիրելի դասախոսներին, որ բարի սերմնացանները դարձան մեր հոգիների, որ սեր ու նվիրում ներարկեցին մեզ գիտության հանդեպ:

Վեհափառ Տեր, թույլ տվեք հանուն ուսանողության կրկին անգամ շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին և մաղթել երկար տարիների քաջառողջ կյանք, թող որ 1993 թվականը մեր բազմաչարչար հայրենիքի ու ժողովրդի համար լույսի ու խաղաղության տարի լինի, բազմաթիվ անգամներ հայրական Ձեր հոգին հուզած դժվարությունները ու կնճռոտ հարցերը չքանան «Ի սահմանաց մերոց և ի բնակութենէս մերմէ»:

Այնուհետև ճեմարանի սաների կատարմամբ հնչում է Մ. Եկմալյանի «Տէր կեցո դու զհայս» երգը և «Լուռ գիշեր» Ծննդյան մեղեդին: Ապա Ե լսարանի սան Եղիա Օհանյանն արտասանում է Դանիել Վարուժանի «Նավասարդյան» բանաստեղծությունը: Ավանդական «Կաղանդչեքեր»-ից ու «Վիճակահանություն»-ից հետո, ներկաներին իր օրհնության ու շնորհավորանքի խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՀԱՆԴԵՍԻՆ

Ամեն տարի ինձ համար միշտ հաճույք է ձեզ հետ միասին մեր համեստ սեղանների շուրջ լինել՝ դիմավորելու համար Նոր տարին: Այս տարի, անավասիկ, կրկին միասին ենք, ավարտվում է 1992 թվականը և շուտով պիտի ողջունենք լուսաբացը հաջորդ տարվան: Եվ նման առիթներով ես միշտ գոհունակությամբ հաստատել եմ, թե այս երեկոյի ծրագիրները ընդհանրապես բավական հաջող կերպով են կատարվել անցյալ տարիներին: Իսկ այս տարի, իմ տպավորությունն այն է, որ բացառիկ հաջող ստացվեց. և՛ երգեցողությունները, երաժշտական մասը, արտասանությունները լավ ընտրված էին, դա շատ կարևոր է:

Խոսքերը բացառիկ լավ էին, ինձ համար հույժ գնահատելի: Շատ հավանեցի մեր սրբազան տեսուչի խոսքը՝ լուրջ մտածված և գեղեցիկ արտահայտված:

Շատ գնահատեցի նաև մեր ուսանողների անունից արտասանված խոսքը, որ մեր սարկավագը խոսեց: Պետք է քեզ շնորհավորեմ ես: Եվ գիտեք ինձ համար, որ իբրև Հայրապետ արդեն 37 տարի է նման առիթներով ես լսում եմ ուսանողության անունից արտասանված խոսքերը, այդ շարքում մեր այսօրվա սարկավագի խոսքը բացառիկ տեղ պիտի գրավի իմ գիտակցության մեջ՝ ամեն տեսակետով արդիական մեր օրերին համապատասխան: Ես նույնիսկ այսպիսի առիթներով, թույլ տվեք ասելու, հպարտանում եմ: Հպարտա-

նում եմ, որ մեր հոգևոր ճեմարանի ուսանողների շարքում այսպիսի խոսք կարող են հորինել մեր երիտասարդ սարկավագները, սա նշանակում է, որ մեր հոգևոր ճեմարանը իր հոգևոր գործունեության, առաքելության ուղիղ ճանապարհի վրա է գտնվում և կարողանում է ներշնչել այդպիսի ներշնչանքով մեր պատանիներին և մեր սաներին: Կմնա, որ հավատարիմ մնաք բոլորդ այն ներշնչանքներին, մանավանդ վերջավորության կոչին, մաղթանքին, որ ուղղեց մեզ, մի տեսակ ուխտ էր, խոստովանություն էր՝ հավատարիմ մնալու մեր հավատքին, հավատարիմ մնալու մեր Եկեղեցուն: Եվ գեղեցիկ նախադասությամբ արտահայտեց այն միտքը, որ մենք՝ բոլոր երիտասարդներս նվիրումով և կարգապահությամբ շրջապատենք Վեհափառ Հայրապետին: Շատ գոհ եմ, որ այսպիսի խոսք լսեցի այս երեկո:

Երբեմն պատահում են անկարգություններ, որոնք չեն ներդաշնակվում Վեհափառ Հայրապետի շուրջ համախմբվելու, հավատարիմ մնալու գեղեցիկ գաղափարին: Մեր ուժը, սիրելի երիտասարդներ, կարգապահության մեջ է, միասնության մեջ է և հարգանքի, հարգանքի դեպի Ամենայն Հայոց Հայրապետը: Ամենայն Հայոց Հայրապետը խորհրդանիշն է՝ իմ անձից անկախ: Այս իրողությունը, ճշմարտությունը երբեմն ոմանք չեն հասկանում, մեծամտանում են, հովեր են առնում, անկարգություններ են երբեմն տեղի ունենում մեր Եկեղեցու ծոցում: Անշուշտ դրանք բացառություններ են. ես չեմ վախենում այդպիսի երևույթներից, բայց համենայնդեպս քանի մեր երիտասարդ ուսանողը այդ ուժգին կերպով ընդգծեց, ես հուզվեցի և գնահատեցի այդ մտածումը, որ ես ընդունում եմ իբրև մի տեսակ ուխտ և կոչ ուղղված հատկապես ձեզ բոլորիդ՝ երիտասարդնե՛ր:

Այն պահին, երբ այս ներքին կարգապահությունը խախտվի մեր մեջ, մեր Եկեղեցին կտկարանա, իսկ մեր հիմնական նպատակը մեր Եկեղեցին ամրացնելն է: Մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ զանգված, մեկ բռունցք, եթե կուզեք: Ահա այս ոգիով է, որ Հիսուս ստեղծեց Եկեղեցու խորհուրդը և այդ հիմքերի վրա է, որ եկեղեցիները կարող են գոյատևել, ծաղկել և իրենց առաքելությունը ամբողջապես իրագործել:

Ռումինական ժողովրդական բանահյուսության մեջ մի ավանդություն կա, որ ինչ-որ մի ժամանակ, ինչ-որ մի տեղ Նոր տարվա լուսաբացին մարդիկ գնում էին իրենց գյուղի ջրհորի մոտ և նայում էին այդ ջրհորի, այդ կախարդական ջրհորի մեջ և այդ առավոտ, տարին մի անգամ ջրհորի մեջ նայելով տեսնում էին, թե ինչ դեպքեր պիտի կատարվեն տարվա ընթացքին: Եվ տեսնում էին երբեմն լավ իրադարձություններ՝ բարի, բարեբեր, իսկ երբեմն ընդհակառակը՝ տխուր, դժբախտ և տագնապալի անցուդարձեր: Ըստ այդ հեքիաթին, երբ մեկը կտեսներ իր տագնապալի վատ ճակատագիրը, որ սպասում էր իրեն այդ տարվա ընթացքին, անձնասպան պիտի լիներ, որպեսզի այդ տառապանքները չկրի:

Համենայնդեպս սա մի հեքիաթ է, բայց ինչ-որ կարծես մի բան ասում է մեզ բոլորիս, որովհետև բոլորս մենք այս պահին, թեև այդ կախարդական ջրհորը չկա մեր առջև, բայց համենայնդեպս կանգ ենք առնում և, ուզենք թե չուզենք, բնական կերպով մտածում ենք, թե ինչ պիտի պատահի հառաջիկա տարվա 365 օրերի ընթացքում: Սա մի խորհուրդ է, անծանոթ բոլորիս և բոլորին որովհետև եթե մենք անդրադառնանք այդ վերջին տարիների անցուդարձներին նախկին Խորհրդային Միության սահմաններից ներս, սահմաններից դուրս, Արևելյան Եվրոպայում տեղի ունեցան համաշխարհային երևույթներ՝ և դրական և՛ բացասական, մանավանդ արյունահեղ ընդ-

հարումներ, որոնք տեղի են ունենում համաշխարհային մակարդակի վրա մեր երկրագունդի բազմաթիվ վայրերում: Հենց վերջերս, երեկ կարդում էի, Սոմալիում տասնյակ հազարավոր մարդիկ քաղցից և հիվանդություններից մահանում են: Այս վերջին չորս-հինգ տարիների դեպքերը և իրադարձությունների առիթով մենք մտահոգ ենք և մտածում ենք, արդյոք այս 1993 թվականը ինչ պիտի լինի, ինչ ճակատագիր պիտի ունենանք մենք, մանավանդ մեր ժողովուրդը, մեր հայրենիքը, մեր Արցախը:

Ահա այսպիսի հոգեբանական մի պահ ապրում ենք մենք այսօր, կարծեք թե այդ կախարդական ջրհորի առջև գտնվելինք:

Մենք պետք է մոտենանք մեր նոր կյանքին և դիմավորենք քաջությամբ և համարձակությամբ 1993 թ. քրիստոնեական հույսով և քրիստոնեական հավատքով, որ այն, ինչ որ արդար է, պետք է անպայման հաղթանակի: Ավետարանը մեզ պատգամում է, թե ով ամուր հավատք ունի, կարող է նույնիսկ լեռները շրջել:

Այս համոզումով իմ կարծիքով պետք է հավաքված լինենք բոլորս դիմագրավելու համար ճակատագրի փորձությունները քաջությամբ և լավատեսությամբ և դրանք հաղթահարելու կամեցողությամբ: Այն պայքարը, որ մղում է մեր ժողովուրդը ընդդեմ բոլոր տեսակ չարիքների և բռնությունների՝ ազատ և անկախ ապրելու իդեալով ոգեշնչված, մենք պետք է համոզված լինենք, որ ինչքան էլ ծանր լինեն մեր կյանքի պայմանները, ինչքան էլ դժվարություններ մեր շուրջ գլուխ բարձրացնեն, համենայնդեպս դրանք պետք է դիմագրավել և հաղթահարել: Այդ ճանապարհը մեր ներքին հավատքն է, ինքնավստահությունը, չարին հարվածելու կամեցողությունը և ուժը, հաղթանակի հասնելու հույսը և հավատքը: Եվ ինչ որ ասում եմ ես մեր ժողովրդի համար, միայն այսօր չէ, որ տեղի է ունենում Մանավանդ վերջին հազար և քանի հարյուր տարիների ընթացքում մեր հայ ժողովուրդը բազում անգամներ նման կացությունների առջև է գտնվել, նույնիսկ ավելի վատթար, քան հիմա: Մեր պատմիչներն ինչեր են արձանագրել մեր ձեռագիրների վերջին էջերին իրենց տեսած արհավիրքների, զրկանքների, փոթորկումների և նահատակությունների մասին:

Այնպես որ մենք վախեցող ժողովուրդ պետք չէ լինենք այսօրվա դժվարություններից:

Ահա այս համոզումով, այս լավատեսությամբ է, որ պիտի ապրենք, ավելի լավ պիտի ապրենք և պիտի հաղթական դուրս գանք այս դժվարություններից և պիտի դիմավորենք խաղաղության նավահանգիստը, երբ մեր երկիրը վերագտնե իր անդորրը:

Ահա այս ոգեշնչումով, այս լավատեսական զգացումներով ես կուզեի վերջացնել իմ խոսքը, աղոթելով, որ Աստված, Բարին Աստված, Ողորմած Աստված իր հայացքը դարձնի դեպի մեր Մայր Հայաստանը, մեր քրիստոնյա ժողովուրդը, մեր նահատակվող ժողովուրդը և բանա վերջապես հուսո և լուսո դռները և մենք իբրև ժողովուրդ կարողանանք շարունակել մեր գոյությունը, մեր առաքելությունը՝ հանուն Քրիստոսի և հանուն ազատության. ամեն:

Ամանորյա գեղեցիկ հանդիսության ավարտին, բոլոր ներկաները միաբերան երգում են «Հայրապետական մաղթերգը»: Այդ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ու խմբովին երգված «Հայր մեր»-ով իր ավարտին է հասնում Տարեմուտի հանդեսը:

ԷՋՄԻԱԾԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Կենագիշերին Մայր տաճարի զանգերի խորհրդավոր ղողանջները ազդարարում են հին տարվա ավարտը և նոր՝ 1993-րդ տարվա գալուստը:

Հաջորդ օրը, հունվարի 1-ին, Մայր տաճարի Ավագ ս. խորանի վրա ս. պատարագ է մատուցում գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և հավուր պատշաճի քարոզ խոսում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է Հայրապետական մաղթանք: Ապա եկեղեցական թափորով Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, որտեղ Մայրավանքի միաբանությունն ու ուսանողությունը շնորհավորում են Հայոց Հայրապետի Նոր տարին: